



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 06 (463) «03» մարտի 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
85	«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-3-Ն օրենքը	3
86	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-4-Ն օրենքը.....	7
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
87	«Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 188-Ն որոշումը.....	8
88	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 39 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 189-Ն որոշումը.....	16
89	«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի ղեկավարի և Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի՝ Նորշեն, Ծովատեղ, Սոս, Վարանդա համայնքների, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ նշանակելու մասին» ԱՀ կառավարության N 192-Ն որոշումը	18
	ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
90	««Իշխան Սահակյան Մարատի» անհատ ձեռնարկատիրոջը տրված լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 23 հրամանը.....	19
91	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 13-Ա հրամանը.....	20
92	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության դադարեցման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 14-Ա հրամանը.....	21
	ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	

	ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿՃՈՒՐԵԿ ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
93	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0720/02/21 որոշումը.....	22

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
փետրվարի 2-ին

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-38 օրենքի (այսուհետ՝ Օրենք) տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, իսկ 7-րդ հոդվածի «ժ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի «ժդ» ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժե» ենթակետ.

«ժե) համայնքի տարածքում մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների, բանկոմատների, տերմինալների տեղադրման թույլտվության համար:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10. Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝
ա. մինչև 20 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ մինչև 5000 դրամ.

բ. 20 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 300 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հասարակական, արտադրական և այլ նպատակային նշանակության օբյեկտների համար՝ մինչև 10 000 դրամ.

գ. 300 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 500 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 500 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հասարակական, արտադրական և այլ նպատակային նշանակության օբյեկտների համար՝ մինչև 20 000 դրամ.

դ. 500 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 1000 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50 000 դրամ.

ե. 1000 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 2000 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 70 000 դրամ.

զ. 2000 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100 000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 2000 դրամ.

բ. 20 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 4000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է մինչև 2000 դրամ:

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 3000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 25 000-150 000 դրամ:

5. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օբյեկտի համար՝

1) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 200 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 0-3000 դրամ:

բ. 200-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝

- մինչև 18 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինությունների ներսում՝ 0-4000 դրամ:

- 18 քառակուսի մետրից ավելի՝ մինչև 80 քառակուսի մետր ներառյալ ընդհանուր մակերես ունեցող շինությունների ներսում՝ 4000-8000 դրամ:

- 80 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող շինությունների ներսում՝ 8000-12 500 դրամ:

2) ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 200 բնակիչ ունեցող համայնքի համար՝ 0-4000 դրամ:

բ. 200-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի համար՝ 2000-6000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար (բացառությամբ մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման) տեղական տուրքը սահմանվում է 100-350 դրամ:

2) շրջիկ առևտուր իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 250-1000 դրամ:

3) մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների, բանկոմատների, տերմինալների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 100-350 դրամ:

4) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000-200000 դրամ՝ յուրաքանչյուր օբյեկտի համար:

5) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20000-60000 դրամ:

6) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պատերազմական գործողություններից տուժած, նոր բնակեցվող, ծայրամասային և լքված բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10000 դրամ:

7) Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պատերազմական գործողություններից տուժած, նոր բնակեցվող, ծայրամասային և լքված բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-5000 դրամ:

7. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժ» ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ 20000-50000 դրամ:

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 0-10 000 դրամ:

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 2500-12500 դրամ:

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 7500-25 000 դրամ:

4) խաղատների կազմակերպման համար՝ 12500-250 000 դրամ:

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 62 500-75 000 դրամ:

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 12 500-25 000 դրամ:

9. Համաքաղաքային կանոններին համապատասխան Ստեփանակերտ քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-4000 դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ավիոհոլային՝ սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս, արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ:

2) թունդ ակոհոլային՝ սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս, արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500-2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1000 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 0-500 դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-1000 դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ՝ յուրաքանչյուր մեքենայի համար:

13. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ ընթացիկ տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 10 000-20 000 ՀՀ դրամ.

2) հեստապարային ակումբի համար՝ ընթացիկ տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝ 100 000-300 000 ՀՀ դրամ:

14. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, Ստեփանակերտ քաղաքում՝ 2.0 անգամ ավելի:

15. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական համայնքներում հաշվարկվում են 0.4, Ստեփանակերտ քաղաքում՝ 1.5, իսկ քաղաքային այլ համայնքներում՝ 1.0 գործակիցների կիրառմամբ:»:

Հոդված 4. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-րդ հոդված.

«Հոդված 22. Անցումային դրույթներ

1. 2022 թվականի համար չեն գործում սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սահմանափակումները: Թույլատրվում է մեկական անգամ կատարել տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերի փոփոխություն՝ միայն նվազեցման ձևով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 10-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «գ», «ե», «զ» պարբերությունների և 6-րդ կետի 3-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից, իսկ 1000 քառակուսի մետրից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 2023 թվականի հունվարի 1-ը տեղական տուրքը կհաշվարկվի մինչև 70 000 դրամով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. փետրվարի 28
Ստեփանակերտ
ՀՕ-3-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2022 թվականի
փետրվարի 2-ին

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-1-Ն օրենքի 40-րդ հոդվածի 11-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետ.

«12) տալիս է համայնքում մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող խաղային ավտոմատների ու մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող սննդի առևտրի ավտոմատների, բանկոմատների, տերմինալների տեղադրման թույլտվություն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. փետրվարի 28
Ստեփանակերտ
ՀՕ-4-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2022թ.

N 188-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՄՆԵՐԻ
ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը և 9-րդ հոդվածի 1-ին մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտեի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտեի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ
ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կրած նյութական վնասների հաշվառման, գնահատման, աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրման բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Կոմիտեն գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն՝ Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտե.

2) ռուսերեն՝ Комитет по вопросам материального ущерба Республики Арцах.

3) անգլերեն՝ Committee on material damages of the Artsakh Republic:

5. Կոմիտեն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք և ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Կոմիտեի համակարգը կազմված է կոմիտեի նախագահից, կոմիտեի նախագահի տեղակալներից, կոմիտեի նախագահի խորհրդականից, կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարից, կոմիտեի նախագահի օգնականից և կոմիտեի աշխատակազմից:

7. Կոմիտեին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

8. Կոմիտեի ենթակայությանը կարող են հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

9. Կոմիտեի գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Ս. Դավթի 15:

2. ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Կոմիտեի նպատակները և խնդիրներն են՝

1) նյութական վնասների հաշվառման, գնահատման, աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրման բնագավառում քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) նյութական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ նյութական վնաս կրած անձանց) անհատական գործերի միասնական շտեմարանի ձևավորումը.

3) 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով, ինչպես նաև պատերազմական գործողությունների հետ չպայմանավորված՝ նյութական վնաս կրած անձանց ֆինանսական աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրումը.

4) սոցիալական արդարության ապահովումը՝ նյութական վնաս կրած անձանց ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրերն իրականացնելիս.

5) նյութական վնասների աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի համակարգումը, կազմակերպումը և արդյունավետ իրականացումը.

6) նյութական վնասների աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրմանն ուղղված ծրագրերի մշակումը:

3. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- 1) նյութական վնասների հաշվառման բնագավառում՝
 - ա. իրականացնում է նյութական վնասների հաշվառում,
 - բ. նյութական վնասների համակարգված դիտարկումների կազմակերպում ու իրականացում,
 - գ. նյութական վնաս կրած անձանց անհատական գործերի ստեղծում և փաստաթղթերի պահպանում,
 - դ. նյութական վնասների հաշվառման տեղեկատվական բանկի ստեղծում և կառավարում.

- 2) նյութական վնասների գնահատման, դրանց հետևանքների վերացմանն ուղղված աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրման բնագավառում՝
 - ա. մշակում է նյութական վնասների գնահատման մեթոդաբանություն,
 - բ. հաստատում է նյութական վնաս կրած անձանց տրամադրվելիք պետական ֆինանսական աջակցության և (կամ) փոխհատուցման չափերը,
 - գ. պետական և (կամ) այլ միջոցների հաշվին իրականացնում է աջակցության և (կամ) փոխհատուցման տրամադրում.

- 3) նյութական վնասների հարցերի բնագավառում՝

- ա. օրենսդրական դաշտի կատարելագործում.

- 4) ֆինանսատնտեսական գործունեության բնագավառում՝

- ա. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է պետական գնումների գործընթացի կազմակերպում,

- բ. իրականացնում է կոմիտեի և դրա աշխատակազմի ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպումը և հաշվապահական հաշվառումը.

- 5) տեղեկատվության բնագավառում՝

- ա. տեղեկատվական քաղաքականության և հանրության հետ կապերի կազմակերպում ու իրականացում:

4. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Կոմիտեի նախագահը գլխավորում է կոմիտեն և կառավարում կոմիտեի համակարգի մեջ մտնող կազմակերպությունների գործունեությունը:

13. Կոմիտեի նախագահին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը: Կոմիտեի նախագահն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ կոմիտեի նախագահի ներկայացմամբ:

14. Կոմիտեի նախագահը հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

15. Կոմիտեի նախագահը՝

- 1) պատասխանատու է կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար.

- 2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ կոմիտեի անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ կոմիտեի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

- 3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կոմիտեի համակարգի աշխատողներին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

- 4) հաստատում է հաստիքացուցակը.

- 5) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

- 6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կոմիտեի աշխատակազմի ղեկավարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների, Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

10) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների (վարչություններ, բաժիններ) հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

11) սահմանում է կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

12) կարող է կազմավորել աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

13) իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական իրավական ակտեր, արձակում հրամաններ, տալիս ցուցումներ.

14) տրամադրում է արձակուրդ կոմիտեի աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան.

15) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

16. Կոմիտեի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը:

17. Կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է կոմիտեի նախագահի կողմից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն (գործունեությունը) իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր լիազորությունների շրջանակներում կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին (վարչություններ, բաժիններ) փոխանցում է կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում՝ կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով կոմիտեի նախագահին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է կոմիտեի նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

5. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

18. Կոմիտեի աշխատակազմի նպատակը և խնդիրը՝ օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ կոմիտեին վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, քաղաքացիական իրավահարաբերություններին կոմիտեի մասնակցության ապահովումն է:

19. Կոմիտեի աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես պետական կառավարչական հիմնարկ, ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

20. Կոմիտեի աշխատակազմը գործում է Քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի, իրավական այլ ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

21. Կոմիտեի աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է Արցախի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և

անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

22. Կոմիտեի աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք: Կոմիտեի աշխատակազմը կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

23. Կոմիտեի աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Կոմիտեի աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

24. Կոմիտեի աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

25. Կոմիտեի աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Կոմիտեի աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև կոմիտեի լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:

26. Կոմիտեի աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

27. Կոմիտեի աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության նյութական վնասների հարցերի կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

28. Կոմիտեի աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղաք Ստեփանակերտ, Ս. Դավթի 15:

6. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

29. Կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ և բաժիններ):

30. Կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է կոմիտեի նախագահը:

7. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

31. Կոմիտեի աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռքբերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում:

32. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնելու կոմիտեի աշխատակազմին հանձնված գույքը:

33. Կոմիտեի աշխատակազմն իրավունք ունի օրենքով, իրավական այլ ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իրեն հանձնված գույքը:

8. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

34. Կոմիտեի աշխատակազմի կառավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության կառավարությունը և կոմիտեի նախագահը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում: Կոմիտեի աշխատակազմը ղեկավարում է կոմիտեի աշխատակազմի ղեկավարը, որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

35. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) հաստատում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները:

2) որոշում է կոմիտեի աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը:

3) հաստատում է կոմիտեի աշխատակազմի կառուցվածքը:

4) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

36. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարն օրենքով, իրավական այլ ակտերով, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով, կոմիտեի նախագահի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կոմիտեի աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության որոշումների և կոմիտեի նախագահի հրամանների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը, օրենքով սահմանված կարգով, գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ հանդիսանում պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

38. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել Արցախի Հանրապետության կառավարության, կոմիտեի նախագահի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները և դրանց չկատարման համար չի ենթարկվում պատասխանատվության:

39. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներից մեկը՝ կոմիտեի նախագահի հրամանով:

40. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար:

2) օրենքով, իրավական այլ ակտերով հիմնադրի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին և տեխնիկական սպասարկումն ապահովող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ:

5) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

6) կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է կոմիտեի աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար:

7) կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ կոմիտեի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

8) կազմակերպում է կոմիտեի բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը:

9) կազմակերպում է կոմիտեում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը:

10) վերահսկում է կոմիտեի աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

11) կոմիտեի նախագահի ստորագրությանն է ներկայացնում կոմիտեի նախագահի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները.

12) ապահովում է համագործակցությունն Արցախի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

13) կազմակերպում է կոմիտեում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

14) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

9. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

41. Կոմիտեի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է կոմիտեի աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է կոմիտեի աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» օրենքով իր վրա դրված լիազորությունները:

42. Կոմիտեի աշխատակազմի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, կոմիտեի աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

43. Կոմիտեի աշխատակազմն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների մասին և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

44. Կոմիտեի գործունեության մասին տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

10. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

45. Կոմիտեի աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ
ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նյութական վնասների կառավարման և քաղաքականության մշակման վարչություն

2. ԲԱԺԻՆՆԵՐ

2.1. Ընդհանուր բաժին

2.2. Ֆինանսատնտեսական բաժին

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 մարտի 2022թ.

N 189-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին» N 39 որոշման 2-րդ կետի՝

1) «ա» ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածի 3-րդ կետից հանել «Էկոնոմիկայի և» բառերը.

2) «բ» ենթակետով հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մարտի 1-ի N 189-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
«24» հունվարի 2006թ. թիվ 39 որոշման

Կ Ա Ձ Մ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արայիկ Հարությունյան - Արցախի Հանրապետության Նախագահ (Խորհրդի նախագահ)
2. Նորայր Մուսայելյան - Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
3. Տիգրան Առստամյան - Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ
4. Բենիկ Բախշիյան - Արցախի Հանրապետության Նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ՝ տնտեսության և տարածքային կառավարման գծով (հասարակական հիմունքներով)»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 մարտի 2022թ.

N 192-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԲԵՐԴԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ
ԲԵՐԴԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ՝ ՆՈՐՇԵՆ, ԾՈՎԱՏԵՂ, ՍՈՍ, ՎԱՐԱՆԴԱ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ
ԱԿՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-3-րդ մասերը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 75-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա ջ ու մ է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի ղեկավար Մխիթար Միքայելի Մարգարյանի լիազորությունները:

2. Նշանակել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Բերդաշեն համայնքի ղեկավարի և Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի՝ Նորշեն, Ծովատեղ, Սոս, Վարանդա համայնքների, Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Ակնաբերդ համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«03» մարտի 2022 թվական

N 23

ք.Ստեփանակերտ

**«ԻՇԽԱՆ ՄԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԱՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ հոդվածների, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 11-րդ կետերի համաձայն և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի լիցենզավորման հանձնաժողովի 2022 թվականի մարտի 3-ի N 01 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «ԻՇԽԱՆ ՄԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԱՏԻ» անհատ ձեռնարկատիրոջը 2020 թվականի փետրվարի 6-ին տրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի N 000025 լիցենզիայի գործողությունը՝ մինչև օրենքով սահմանված հաշվետվության ներկայացումը և լիցենզիայի տարեկան պետական տուրքի, ինչպես նաև դրա վճարումն ուշացնելու համար օրենքով սահմանված տույժերի գումարների գծով պարտավորությունների կատարումը:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին ապահովել՝

1) լիցենզիայի գործողության կասեցման մասին տեղեկությունների գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Նորայր Մուսայելյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

25 փետրվարի 2022թ.

N 13-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 24.02.2022թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հ Ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Ներքոնշյալ ընկերություններին տրամադրել լիցենզիաներ՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳՍՅԱՆ» ԱԶ ք. Ստեփ., Կունյանցների փող. շենք 1/16	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
2		Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական
3	«ԼՈՒՄԻՆԵ» ՍՊԸ ԱՀ, Մարտակերտի շրջան, գ. Չլդրան	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԱՐԳՍՅԱՆ

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

25 փետրվարի 2022թ.

N 14-Ա

ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 24.02.2022թ եզրակացությունը և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի և 7-րդ կետի պահանջներով

հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Դադարեցնել ներքոնշյալ ընկերության տրամադրած լիցենզիայի գործունեությունը՝

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Լիցենզիայի համարը	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակը
1	«ՎԼ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ ԱՀ, ք. Հաղբուք, Սկրտչյան 37/1	ՔՓՄ-868	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/0720/02/21
Քաղաքացիական գործ ԸԻԴ/0720/02/21
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան
Դատավորներ՝ Լ. Ավանեսյան
Ս. Ավանեսյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

22 փետրվարի 2022թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ Ն. Նարիմանյանի
մասնակցությամբ՝ դատավորներ Ի.Կարապետյանի
Հ. Աբրահամյանի
Գ.Գրիգորյանի
Կ.Ղարայանի

դրնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Անահիտ Հրաչիկի
Գասպարյանի ընդդեմ ԱՀ քաղաքաշինության նախարարության՝ 3.600.000 ՀՀ
դրամ՝ որպես պատճառված վնասի գումար, բռնագանձելու պահանջի մասին
քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ
դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի որոշման դեմ հայցվոր
Ա.Գասպարյանի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

2021 թվականի մայիսի 4-ին Անահիտ Հրաչիկի Գասպարյանը, ի դեմս
ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի, հայց է ներկայացրել Արցախի
Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
(այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան)ընդդեմ ԱՀ քաղաքաշինության
նախարարության (այսուհետ, նաև՝ Նախարարություն)՝ 3.600.000 ՀՀ դրամ՝
որպես պատճառված վնասի գումար, բռնագանձելու մասին պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մայիսի 6-ի որոշմամբ
հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի մայիսի 31-ի որոշմամբ
հրավիրվել է նախնական դատական նիստ 2021 թվականի օգոստոսի 9-ին:

Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի օգոստոսի 9-ի որոշմամբ
քաղաքացիական գործը նշանակվել է դատական քննության 2021 թվականի
սեպտեմբերի 16-ին:

Առաջին ատյանի դատարանի (դատավոր Ն.Առաքելյան) 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն: Վճռվել է ԱՀ
քաղաքաշինության նախարարությունից հօգուտ Անահիտ Գասպարյանի
գանձել 3.592.800 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում: Անահիտ
Գասպարյանի հայցն ընդդեմ ԱՀ քաղաքաշինության նախարարության՝ 7.200

ՀՀ դրամ գումար՝ որպես պատճառված վնասի հատուցում, գանձելու պահանջի մասին մերժվել է:

Նշված վճռի դեմ Նախարարությունը, հայցապահանջն ընդունելով միայն 2.203.810 ՀՀ դրամի չափով, 2021 թվականի հոկտեմբերի 29-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բողոքարկվող մասով բեկանել Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռը և այն փոփոխել, հայցը մասնակի մերժել:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2021 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և գործը նշանակվել դատական քննության:

2021 թվականի նոյեմբերի 8-ին հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը ներկայացրել է վերաքննիչ բողոքի գրավոր պատասխան:

Վերաքննիչ դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Առաջին ատյանի դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 30-ի վճիռն ամբողջությամբ բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2021 թվականի հունվարի 10-ին վճռաբեկ բողոք է բերել հայցվորի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը: Վճռաբեկ բողոքի համար վճարվել է 50.000 ՀՀ դրամ: Միաժամանակ, բողոքաբերը միջնորդություն է ներկայացրել՝ պետական տուրքի չվճարված մասի համար արտոնություն սահմանելու՝ այն է՝ վճարման ժամկետը հետաձգելու և վերջնական դատական ակտով անդրադառնալու կամ վճարելու համար մեկամսյա ժամկետ սահմանելու մասին:

Վճռաբեկ բողոքը՝ կից փաստաթղթերով, և քաղաքացիական գործը Գերագույն դատարանի դատական կազմին են հանձնվել 2022 թվականի հունվարի 12-ին:

Գերագույն դատարանի 2022 թվականի հունվարի 31-ի որոշմամբ հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանի միջնորդությունը բավարարվել է. վճռաբեկ բողոքի համար չվճարված պետական տուրքի (58.000 ՀՀ դրամ) վճարումը հետաձգվել է մինչև գործով վերջնական դատական ակտ կայացնելը և վճռաբեկ բողոքն ընդունվել վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական նորմերի խախտումների հիմքերով:

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 3-րդ մասի, 229-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 2-րդ մասի, 1061-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը նշել է, որ գործով՝ ինչպես Առաջին ատյանի դատարանում, այնպես էլ վերաքննիչ բողոքում, չի վիճարկվել փաստն առ այն, որ հայցվորին պատճառվել է վնաս, որը, ըստ քաղաքացիական օրենսդրության կարգավորումների, լրիվ ծավալով ենթակա է հատուցման: Վնասը պատճառվել է Նախարարության մեղքով, քանի որ այն շենքի տանիքը, որում տեղակայված է հայցվորի բնակարանը, քանդվել է տանիքը փոխարինելու նպատակով, սակայն շինարարին չեն տրամադրվել անհրաժեշտ նյութեր կամ գումար, այդ պատճառով շենքի տանիքի կեսը փոխարինելուց հետո մյուս կեսը մեկ շաբաթից ավել մնացել է բաց, որից հետո պատերազմ է սկսվել, ու աշխատանքները չարունակելու պատճառով տեղի է ունեցել այն, որ

անձրևաջրերն ամիսներ շարունակ թափվել են հայցվորի բնակարան և վնասել ինչպես անշարժ, այնպես էլ շարժական գույքը:

Ըստ բողոքաբերի՝ Նախարարությունը հայցադիմումի պատասխան չի ներկայացրել, դատական նիստերին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը և որևէ կերպ դիրքորոշում չի հայտնել, այն դեպքում, երբ դատարանի կողմից պարզաբանված են եղել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի պահանջներն (նախագրուշացման եղանակով) այն մասին, որ պատասխանողը պարտավոր է ներկայացնել հայցադիմումի պատասխան:

Նախարարության կողմից վերաքննիչ բողոքով հայցի մասնակի ընդունմամբ ևս հիմնավորվել է հայցվորի պահանջն առ այն, որ Նախարարության մեղքով է վնաս պատճառվել, և թե տանիքի վերանորոգման աշխատանքներն ում էին պատվիրված եղել, դա էական նշանակություն չունի, քանի որ Նախարարությունն էլ, իր հերթին, եթե ապացուցի, որ աշխատանքներ իրականացնող ընկերությունն է մեղավոր, ապա կարող է իրացնել իր հետադարձ պահանջի իրավունքը:

Ըստ բողոքի՝ պատերազմն ավարտվել է 10.11.2020 թ.-ին, սակայն մինչև 25.01.2021թ. և դրանից հետո պատասխանողը որևէ միջոց չի ձեռնարկել հայցվորի գույքին պատճառված վնասը հարթելու ուղղությամբ, այլ 25.01.2021թ.-ի գրությամբ հայտնել է, որ կստեղծվի հանձնաժողով՝ պատճառված վնասի չափը գնահատելու նպատակով, սակայն հանձնաժողովն առ այսօր չի ստեղծվել: Ուստի հայցվորը դիմել է համապատասխան լիցենզավորված ընկերություն և ստացել նախահաշիվ, որով արձանագրված վնասի չափը թեև իրեն հասցված վնասների համեմատ քիչ է, սակայն համակերպվել է դրան և դիմել դատարան:

Բողոքաբերը նշել է նաև, որ պատասխանողը, ունենալով բոլոր հնարավորությունները դատարան հայցադիմումի պատասխան կամ առարկություններ ներկայացնելու համար, անգործություն է ցուցաբերելուց հարգելի պատճառներով անգամ դատական նիստերին չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը, իսկ վճռի կայացումից հետո այն բողոքարկել է՝ նշելով, որ մի դեպքում՝ գումարի չափն է ավել նշված, մյուս դեպքում՝ իբրև պատերազմի հետևանքով է տանիքը վնասվել, և խնդրել է հայցը մասնակի բավարարել, այսինքն՝ 2.203.810 ՀՀ դրամի չափով, և չի խնդրել գործը նոր քննության ուղարկել: Ինչպես Վերաքննիչ դատարանում պատասխանողի ներկայացուցիչների տված բացատրություններից, այնպես էլ Նախարարության կողմից կազմված հաշվարկից դիտվում է, որ ինչ-որ հարկերի գումարներ են հաշվանցել վնասի չափից, և հղում կատարելով Կառավարության 24.02.2015թ. ինչ-որ որոշմանը, համարում են հայցվորի ներկայացրած նախահաշիվն այդ որոշմանը չհամապատասխանող:

Ըստ բողոքաբերի՝ այդպես էլ անհասկանալի է, թե ինչ հարկի գումարներ են հաշվանցվել կամ այդ ով է իրավասու որոշել, որ հայցվորի տան 4 միլիմետր հաստությամբ փայտյա մանրահատակի փոխարեն պետք է լինի 2 միլիմետր հաստությամբ ինչ-որ խտացրած թղթից մանրահատակ, որը, Վերաքննիչ դատարանում ներկայացվածի համաձայն, ավելի էժան է, կամ որ Կառավարությունն այդպես է որոշել: Վկայակոչելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 2-րդ մասը և 1061-րդ հոդվածը, բողոքաբերը շեշտել է, որ այն կարգավորումը, ըստ որի՝ վնասը լրիվ ծավալով պետք է հատուցվի, ենթադրում է, որ բնակարանը պետք է բերվի նախկին տեսքի, և չի ենթադրում, որ, օրինակ, փայտը պետք է փոխարինվի գիպսի կամ հակառակը: Ըստ բողոքի՝ Առաջին աստիճանի դատարանը ճիշտ է վարվել, երբ որ բացասական հետևանքները թողել է Նախարարության վրա, քանի որ մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

Շարադրելով վերաքննիչ բողոքի իր պատասխանի (որում նշել է, որ վերաքննիչ բողոքը ենթակա չէ քննարկման) և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները» վերտառությամբ 218-րդ հոդվածի 3-րդ մասի, 229-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի բովանդակությունը, բողոքաբերը պնդել է, որ վերաքննիչ դատարանն այն անտեսել է և, ակնհայտ խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի և 218-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, ղեկավարվել է նույն օրենսգրքի 230.4-րդ հոդվածի 1-ին մասի և 231-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և անտեղի բեկանել դատական ակտը, դրանով իսկ դատական շրջապտույտի մեջ թողել հայցվորին, ով երկու տարի է կրում է վնասներ:

Ըստ բողոքաբերի՝ հայցվորը, պնդելով, որ իրեն պատճառված վնասը լրիվ ծավալով պետք է հատուցվի, գտել է նաև, որ դատարանները պարտավոր են ողջամիտ ժամկետում և առանց դատական շրջապտույտի հարցի վերջնական լուծում տալ, հետևաբար, Գերագույն դատարանն էլ պետք է իր սահմանադրական լիազորություններն իրականացնի և, առերևույթ թույլ տրված դատական սխալն արձանագրելով, օրինական ուժ տա Առաջին ատյանի դատարանի վճռին, որպեսզի հայցվորը ստիպված չլինի ևս մեկ կամ մի քանի տարի բնակվի վարձակալական հիմունքներով:

Ըստ բողոքի՝ Գերագույն դատարանն իր մի շարք որոշումներով բազմիցս անդրադարձել է ապացույցների ընտրության, վերաբերելիության, գնահատման, իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման, ինչպես նաև դատական ակտի պատճառաբանվածության և օրինականության հարցերին: Այն է՝ Գերագույն դատարանը նշել է, որ դատական ակտի իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պատճառաբանի, թե ինչու է այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Շարադրելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի, 241-րդ հոդվածի 1-ին և 1-ին հոդվածի 1-ին մասերի, 121-րդ հոդվածի 3-րդ, 121.1-ին հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի և 230-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը, բողոքաբերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերի առկայությամբ:

Ըստ բողոքի՝ սույն գործի փաստաիրավական հիմքերով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման վերաբերյալ Գերագույն դատարանը չունի հայտնած դիրքորոշում, ուստի վճռաբեկ բողոքը ենթակա է ընդունման վարույթ: Գերագույն դատարանի առջև բարձրացվում է նաև այն հարցը, թե արդյոք վերաքննիչ դատարանն իրավասու էր կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, երբ որ բողոքաբերը խնդրել

է դատարանին հայցը բավարարել մասնակի: Գերագույն դատարանի նախկինում կայացրած որոշումներում անդրադարձ չի կատարվել վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջի և վերաքննիչ դատարանի լիազորություններին՝ բողոքով ներկայացված պահանջից դուրս գալու կամ նման հնարավորություն օրենքով սահմանված լինելու մասով, քաղաքացիական դատավարության օրենսգրքով նման հնարավորություն վերապահված չէ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ բողոքարկվող մասով Վերաքննիչ դատարանն առերևույթ խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, քանի որ վերաքննիչ բողոքը չի քննել դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում, այլ դուրս է եկել վերաքննիչ բողոքի սահմաններից, ինչպես նաև խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ Վերաքննիչ դատարանում քննության ոչ ենթակա փաստարկները ներկայացված բողոքով, ի խախտումն հիշյալ նորմի, դատարանը քննության առարկա է դարձրել:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը, գտնելով, որնշված հիմքերի առկայության և իրավունքի զարգացման տեսանկյունից բողոքը ենթակա է ընդունման վարույթ, արդյունքում բողոքարկվող մասով դատական ակտը՝ բեկանման և փոփոխման, որը կրիսի արդարադատության շահերից և կվերականգնվեն հայցվորի խախտված իրավունքները, խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0005311 առ 03.03.2003թ. վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 24 հասցեով գտնվող բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է հայցվոր Անահիտ Գասպարյանին (գ.թ. 8-10):

2) Ըստ գործով ներկայացված հայցադիմումի՝ 2020 թվականի աշնանը ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվող աշխատանքների արդյունքում նշված շենքի տանիքը գտնվել է վերանորոգման փուլում և աշխատանքների դադարեցման պատճառով՝ անձրևաջրերը թափվելու հետևանքով, վնասվել է հայցվորի բնակարանը (գ.թ.3-4):

3) «ՄՍՐՈՅ ՏԵԽ» ՍՊԸ կազմած ամփոփ նախահաշվարկի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 3 շենքի թիվ 24 հասցեով գտնվող բնակարանի վերանորոգման ընդհանուր արժեքը կազմում է 3.592.800 (երեք միլիոն հինգ հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (գ.թ. 11):

4) Ի պատասխան հայցվորի 08.01.2021թ. դիմումի՝ ԱՀ քաղաքաշինության նախարարության 2021 թվականի հունվարի 25-ի գրության համաձայն՝ ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության մասնագետների կողմից ուսումնասիրվել են վերը նշված շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ անձրևային եղանակի պատճառով հասցված վնասի հետևանքները: ...կստեղծվի հանձնաժողով՝ պատճառված վնասի չափերը գնահատելու նպատակով (գ.թ. 12):

5) Պատասխանողն Առաջին ատյանի դատարանի 06.05.2021թ.՝ հայցվորի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝

օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետում չի ներկայացրել հայցադիմումի պատասխան: Պատասխանողը, պատշաճ ձևով տեղեկացված լինելով Առաջին ատյանի դատարանի կողմից 09.08.2021թ. հրավիրված նախնական և 16.09.2021թ. նշանակված դատական նիստերի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին (գ.թ.25, 34):

6) Առաջին ատյանի դատարանի կողմից 30.09.2021թ. վճիռ կայացնելուց հետո պատասխանողը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում, ներկայացնելով իր հաշվարկները, հայցն ընդունել է մասնակիորեն՝ 2.203.810 ՀՀ դրամի չափով, և հայտնել իր անհամաձայնությունը դատարանի վճռի պատճառաբանություններին ու խնդրել մասնակի բեկանել դատարանի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մասնակի մերժել (գ.թ. 47-52):

7) Պատասխանողը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ վերաքննիչ բողոքին կից ներկայացված ապացույցներն Առաջին ատյանի դատարանին չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով:

8) Վերաքննիչ դատարանը, քննարկման առարկա չդարձնելով պատասխանողի կողմից վերաքննիչ բողոքին կից ներկայացված ապացույցները, իր 03.12.2021թ. որոշմամբ վճիռը բեկանել է և գործն ուղարկել լրիվ ծավալով նոր քննության:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումներ

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում է, որ սույն գործով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Գերագույն դատարանը, վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով գործի հանգամանքները և բողոքի փաստարկները, գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել, իսկ որոշումը՝ բեկանել և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի վճռին՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականության հարգանքի իրավունք:

ԱՀ դատական օրենսգրքի «Դատարանի խնդիրները» վերտառությամբ 5-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատությունն օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատարանն ապահովում է անձի՝ Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության վավերացրած միջազ-

գային պայմանագրերով և օրենքով նախատեսված իրավունքների և ազատությունների, պետության և հասարակության շահերի պաշտպանությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանը պետք է պատասխանի այն հարցին, թե արդյոք Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննության ընթացքում թույլ են տրվել իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հիմք են Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու կամ փոփոխելու համար:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիական դատավարությունը կոչված է ծառայելու քաղաքացիական գործերով իրականացվող արդարադատության նպատակներին և խնդիրներին, իսկ քաղաքացիական դատավարության խնդիրներից է քաղաքացիական գործերի ճիշտ ու ժամանակին քննումն ու լուծումը (քաղաքացիների, իրավաբանական անձանց... խախտված կամ վիճարկվող իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության նպատակով):

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության ու գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքներն արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարրերն են, և ինչպես դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից, այնպես էլ բուն դատավարությունն ու դրա ընթացքը՝ կողմերին երաշխավորող դատավարական իրավունքներով ու պարտականություններով, պետք է լինեն այնպես հավասարակշռված, որ չխախտեն այդ իրավունքի էությունը: Դատական պաշտպանության արդյունավետ իրականացման և գործը ողջամիտ ժամկետում քննելու իրավունքների ապահովմամբ միայն կարող է իրականացվել իրավունքի գերակայությունը:

Գերագույն դատարանը փաստում է, որ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը, դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների իրականացմանը: Միաժամանակ Գերագույն դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում փաստել, որ դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը չի կարող համարվել բացարձակ իրավունք, այն կարող է անհրաժեշտության դեպքում ենթարկվել ողջամիտ և իրավաչափ սահմանափակումների, այդ իրավունքի իրացումն օբյեկտիվորեն ունի որոշակի սահմաններ և շրջանակներ:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ դատական պաշտպանության իրավունքն իրացնող սուբյեկտներն իրավական պաշտպանության միջոցներից պետք է օգտվեն բարեխղճորեն: Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցից չօգտվելու դեպքում դատավարության մասնակիցը չի կարող դիմել այնպիսի պաշտպանության միջոցի, որն օրենսդիրը տվյալ դեպքի համար չի նախատեսել:

Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը սահմանում է օրենսդիրը, որի նպատակն արդարադատության պատշաճ իրականացման ապահովումն է: Գերագույն դատարանը գտնում է, որ ցանկացած դատավարական գործողություն, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկումը, կարող է կատարվել միայն այն կարգով, որը սահմանված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցադիմումի պատասխանը և այն ներկայացնելու կարգը» վերտառությամբ 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան: Ելնելով գործի առանձնահատկություններից՝ դատարանը կարող է սահմանել պատասխան ուղարկելու ավելի երկար ժամկետ կամ պատասխանողի միջնորդությամբ երկարաձգել պատասխանը ներկայացնելու ժամկետը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատասխանի հետ պատասխանողը ներկայացնում է նաև իր տիրապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, որոնք հաստատում են իր պնդած փաստերը, եթե նա կրում է դրանց ապացուցման պարտականությունը, և եթե այդ ապացույցները հնարավոր է կցել պատասխանին...: Նշված հոդվածի 5-րդ մասը սահմանում է դատարանի հայեցողական լիազորությունը պատասխան չներկայացնելը գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում:

Ինչպես հետևում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի բովանդակությունից, քաղաքացիական դատավարությունում դատական պաշտպանության իրավունք տրվում է ոչ միայն հայցվորին, այլև պատասխանողին, ինչպես նաև գործին մասնակցող այլ անձանց: Պատասխանողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության դատավարական միջոցներ են համարվում հայցադիմումի պատասխանը և հակընդդեմ հայցը:

Հայցադիմումի պատասխան ներկայացնելու նպատակն է հայցի հիմքերի և առարկայի բովանդակության հետ միաժամանակ, առարկությունների բովանդակությունից ելնելով, որոշել ինչպես անվիճելի փաստերի շրջանակը, այնպես էլ՝ ապացուցման առարկան և ապացուցման բեռը: Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ, որպես կանոն, հայցվորը, սահմանված ժամկետում չստանալով հայցադիմումի պատասխանը, ելնում է այն իրավաչափ կանխավարկածից, որ իր պահանջը չի առարկվել:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին աստիճանի դատարանի դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը» վերտառությամբ 220-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե առաջին աստիճանի դատարանում բողոք բերած անձը զրկված է եղել բողոքարկվող հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից, ապա վերաքննիչ բողոքում պետք է նշի նաև իր դիրքորոշումը բողոքարկվող հարցի վերաբերյալ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները» վերտառությամբ 218-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին աստիճանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին աստիճանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, գործին մասնակցող անձանց վերապահելով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք, միաժամանակ սահմանել է, որ վերաքննիչ բողոքը ենթակա չէ քննության, եթե բողոք բերած անձը բողոքում արտահայտած իր դիրքորոշման մասին չի հայտնել առաջին ատյանի դատարանում՝ գործի քննության ժամանակ: Ընդ որում, բացառություն դիտելով այն դեպքը, երբ բողոք բերած անձի համար անհնարին է եղել հայտնելու վերաքննիչ բողոքում բերած դիրքորոշումը:

Նման օրենսդրական կարգավորումը սահմանափակում է անձի դատավարական իրավունքը բողոքարկել դատական ակտը դատական երկրորդ ատյանում, երբ անձն առաջին ատյանի դատարանում անհարգելի պատճառով չի օգտվել օրենքով նախատեսված դատական պաշտպանության իր իրավունքից:

Նշված ինստիտուտը կոչված է կանխարգելելու իրավունքի չարաշահումը, պահպանելու իրավական որոշակիության սկզբունքը և ապահովելու տնօրինչականության չափանիշները:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը կոչված է ապահովելու գործի քննության այնպիսի պայմաններ, որ կողմը, առաջին ատյանի դատարանում նախապատրաստելով իր դատական պաշտպանությունը, դատարան ներկայացնի հայցի վերաբերյալ իր բոլոր փաստարկները: Վերաքննիչ դատարանի կողմից պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, թե որքանով էր հնարավոր տվյալ փաստարկի (դիրքորոշման) հայտնումն առաջին ատյանի դատարանում վերաքննիչ բողոք բերած անձի կողմից:

Վերաքննության սահմաններն ամրագրված են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածում, համաձայն որի՝

1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու առաջին ատյանի դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն ունի հստակ լիազորություններ (իրավասություններ) և գործում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ու նրա կողմից քաղաքացիական դատավարության իրականացման կարգը չի կարող կամայականորեն փոփոխվել առանձին գործերով:

Գերագույն դատարանը հարկ է համարում սույն վեճի շրջանակներում փաստել, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 2-րդ մասի (որը սահմանում է նոր ապացույց ընդունելու վերաքննիչ դատարանի իրավասությունը) նոր ապացույցն ընդունվում է միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում. ապացույցն առաջին ատյանի դատարանում չի ներկայացվել կողմերի կամքից անկախ պատճառներով, և այն ունի էական նշանակություն գործի լուծման համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական գործերով արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց հավասարության սկզբունքների հիման վրա: Իսկ նույն օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները: Իսկ օրենսգրքի 121.1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Արցախի Հանրապետության Սահմանադրության, նույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի պահանջի սահմաններից դուրս գալու մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ նախ՝ վերաքննիչ բողոքի պահանջը պետք է տրամաբանորեն բխի բողոքի հիմքերից, հիմնավորումներից (այսինքն՝ պատճառաբանական մասից), երկրորդ՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վերաքննության սահմանները և Վերաքննիչ դատարանի լիազորությունները սահմանող 229-րդ և 231-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանն ունի հստակ լիազորություններ և, կաշկանդված լինելով վերաքննիչ բողոքի հիմքերով և հիմնավորումներով (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, դատական ակտի բեկանման անվերապահ հիմքերի առկայության), կաշկանդված չէ բողոքում ներկայացված պահանջով և իր իրավասություններից (լիազորություններից) օգտվում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ըստ դատական պաշտպանության իրավունքի իրականացման, դատավարական նպատակահարմարության և արդարադատության արդյունավետության սկզբունքների: Հետևաբար, պետք է տարբերել վերաքննիչ բողոքի հիմքերը և այդ հիմքերին դատարանի կողմից գնահատական տալը: Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ քաղաքացիական գործի քննության և լուծման համար անհրաժեշտ իրավական նորմերը որոշելը և կիրառելը դատարանի պարտականությունն է: Այլ խնդիր է, երբ դատարանը կարող է ոչ ճիշտ կիրառել կիրառման ենթակա օրենքը և առանց օրենքով նախատեսված դեպքերի դուրս գալ վերաքննիչ բողոքի շրջանակներից և, խախտելով գործին մասնակցող կամ չմասնակցող մյուս անձանց իրավունքները, դատական վեճին լուծում տալ՝ հաշվի առնելով միայն բողոք բերողի շահերը: Նշված դեպքում վերաքննիչ դատարանի դատական ակտը

ենթակա է փոփոխման կամ բեկանման, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածների պահանջներից, համաձայն որոնց նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերաքննիչ բողոքի պահանջը կարող է քննարկվել՝ հաշվի առնելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված՝ կողմերի միջև հաշտության համաձայնություն կնքելու իրավունքը:

Ինչպես հետևում է գործի նյութերից՝ պատասխանող կողմը գրկված չի եղել վերաքննիչ բողոքում արտահայտած դիրքորոշումն Առաջին աստիճանի դատարանում հայտնելու հնարավորությունից, անտարբերություն է ցուցաբերել, չի ներկայացրել դատարան հայցադիմումի պատասխան, չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին և որևէ ապացույց չի ներկայացրել դրանց մասնակցելու և դիրքորոշում հայտնելու անհնարինության վերաբերյալ: Այսինքն պատասխանողը չի պահպանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Պատասխանողը, չներկայացնելով հայցադիմումի պատասխան, չի կատարել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված պարտականությունը:

Նշվածների արդյունքում Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկները հիմնավոր են:

Վերոշարադրյալների հիման վրա Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանն անհիմն է բեկանել Առաջին աստիճանի դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված վերը նշված հոդվածների պահանջների խախտումները Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը բեկանելու հիմք են:

Նյութական նորմերի պահանջների խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստարկներին Գերագույն դատարանը չի անդրադառնում՝ հաշվի առնելով, որ վերը նշված դատավարական իրավունքի նորմերի խախտումները բավարար են բողոքարկված որոշումը բեկանելու և Առաջին աստիճանի դատարանի վճիռն օրինական ուժ տալու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին աստիճանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությունը:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համապատասխանորեն:

Առաջին ատյանի դատարանի վճռով լուծված է դատական ծախսերի հարցը: Քանի որ վերաքննիչ բողոքը բերել է պատասխանողը, վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի հարցը ևս պետք է համարել լուծված: Հայցվորը վճռաբեկ բողոքի համար վճարել է 50.000 ՀՀ դրամ, պետական տուրքի մնացած մասի (58.000 ՀՀ դրամի) վճարումը Գերագույն դատարանի 2022 թվականի հունվարի 31-ի որոշմամբ հետաձգվել է մինչև գործով վերջնական դատական ակտ կայացնելը, հետևաբար պատասխանողից հոգուտ հայցվորի պետք է բռնագանձվի 50.000 ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի դիմաց, և 58.000 ՀՀ դրամ՝ հոգուտ պետության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցվոր Ա.Գասպարյանի ներկայացուցիչ Վ. Հայրապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 30-ի վճռին:

2. ԱՀ քաղաքաշինության նախարարությունից հոգուտ Անահիտ Գասպարյանի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի դիմաց, և 58.000 (հիսունութ հազար) ՀՀ դրամ՝ հոգուտ Արցախի Հանրապետության:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

Ն. ՆԱՐԻՄԱՆՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ